ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ՀԱԿԱՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Ստուգաթերթ N 39

Դեղատուն (**ՏԳՏԴ ծածկագիր՝** 47.73.0)

_____ _____ _____
(տեսչության տարածքային մարմնի անվանումը) (գտնվելու վայրը) (հեռախոսահամարը)

_____ _____
(ստուգող անձի պաշտոնը) (ազգանունը, անունը, հայրանունը)

_____ _____
(ստուգող անձի պաշտոնը) (ազգանունը, անունը, հայրանունը)

_____ _____
(ստուգող անձի պաշտոնը) (ազգանունը, անունը, հայրանունը)

ստուգման սկիզբը (ամսաթիվը)՝ _____ ավարտը՝ _____

_____ _____
(տնտեսավարող սուբյեկտի անվանումը) (ՀՎՀՀ-ն)

_____ _____
(տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը) (հեռախոսահամարը)

_____ _____
(տնտեսվարող սքուբյեկտի ղեկավարի կամ լիազորված անձի ազգանունը, անունը, հայրանունը) (հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագիր _____ ում կողմից _____ երբ է տրված _____

Ստուգման նպատակը/Ընդգրկված հարցերի համարներ _____

N	Հարց	այո	ոչ	չ/պ	կշիռ	հղում	Ստուգման մեթոդ	Մեկնաբանություն
1.	Առկա է գործունեության լիցենզիան և լիցենզիայի պատճենները՝ որոնք փակցված են սրահի կամ սպասասրահի՝ սպառողների համար տեսանելի հատվածում: **Ո**				1	Հղում 1, հոդված 3 , Հղում 2, Հավելված N 3, կետ 41	Փաստաթղթային, տեսողական	
2.	Առևտրի սրահում առկա են՝					Հղում 2,Հավելված N 3, Կետ 17	տեսողական	
2.1	Ցուցադրման սեղաններ				1			
2.2	Ցուցապահարաններ				1			
2.3	Փակ պահարաններ				1			
2.4	Վաճառասեղան				1			
2.5	Սառնարան				3			
2.6	Ջերմաչափ				2			
2.7	Հեռախոս				1			
3.	Գրասենյակում առկա է՝					Հղում 2, Հավելված N 3, Կետ 22	տեսողական	
3.1	Գրասեղան				1			
3.2	Աթոռներ, բազմոց կամ թախտ				1			
3.3	Հագուստի պահարան (անձնական և աշխատանքային հագուստը մեկուսացված են				1			

	միմյանցից)							
4.	Առկա է՝					Հղում 2, Հավելված N 3, Կետ 31	տեսողական	
4.1	Դեղերի պետական գրանցամատյան				1			
4.2	Հիմնական դեղերի ցանկ				1			
4.3	Մինչև յուրաքանչյուր ամսվա տասներորդ օրը թարմացվող, առանց դեղատոմսի բաց թողնվող դեղերի ցանկ:				3			
4.4	Դեղագրքեր, դեղագիտական տեղեկատվական ձեռնարկներ:				2			
5.	Ապահովված է առաջին օգնության պարագաներով՝ ըստ ցանկի: նշում 1				3	Հղում 2, Հավելված N 3, Կետ 39	տեսողական	
6.	Տեղակայված չէ նկուղային կամ կիսանկուղային հարկերում:				3	Հղում 2, Հավելված N 3, Կետ 24	տեսողական	
7.	Ունի համապատասխան շենքի կամ շինության ընդհանուր մուտքից առանձնացված մուտք: Նշում 2				3	Հղում 2, Հավելված N 3 Կետ 25	տեսողական	
8.	Հատկացված տարածքները տեղակայված են միևնույն շինության կամ շենքի տարածքում և ունեն գործառնական կապ: նշում 3				3	Հղում 2, Հավելված N 3, Կետ 27, 28	տեսողական	
9.	Պահեստավորման սենյակներում իրականացվում է.							
9.1	Ջերմաստիճանի ստուգում՝ ունեն ջերմաչափ				2	Հղում 3, Գլուխ 2, Կետ 8	տեսողական	
9.2	Օդի խոնավության ստուգում՝ ունեն խոնավաչափ				2	Հղում 3,Գլուխ 2, Կետ 8	տեսողական	
9.3	Ջերմաչափը և խոնավաչափը ամրացված են սենյակի ներքին պատերին, տաքացնող սարքերից հեռու, հատակից 1,5-1,7 մետր բարձրության և դռներից 3 մ-ից				2	Հղում 3, Գլուխ 2, Կետ 8	Տեսողական, չափում	

	ոչ պակաս հեռավորության վրա:							
10.	Պահեստային սենյակներում օդի մաքրության ապահովման համար ապահովված են մեխանիկական դրդմամբ ներհոս և արտամղիչ օդափոխման համակարգով կամ օդանցքներով կամ վերնափեղկերով կամ տեղադրված են երկրորդ վանդակավոր դռներ:				3	Հղում 3,Գլուխ 2 կետ 9	տեսողական	
11.	Պահեստավորման սենյակները.							
11.1	Ապահովված են դարակաշարերով, պահարաններով, ամանատակերով, ապրանքատակի գերաններով, որոնց թիվը պետք է ապահովի դեղերի պատշաճ պահեստավորումը:				2	Հղում 3, Գլուխ 2 կետ 12.	տեսողական	
11.2	Դարակաշարերը տեղադրվում են այնպես, որպեսզի գտնվեն պատերից՝ 0,6-0,7 մ, առաստաղից՝ ոչ պակաս 0,5 մ և հատակից՝ ոչ պակաս 0,25 մ հեռավորության վրա:				1	Հղում 3, Գլուխ 2 կետ 13.	տեսողական, չափում	
11.3	Դարակաշարերի միջև եղած հեռավորությունը 0.75մ-ից ոչ պակաս է և հնարավոր է ազատ մոտենալ դեղերին:				2	Հղում 3, Գլուխ 2 կետ 13.	տեսողական, չափում	
11.4	Վիրակապական և ռետինե ապրանքների համար ունեն առանձին պահարաններ:				2	Հղում 3, Հավելված N 3, Կետ 20	տեսողական	
12.	Պահպանվում են դեղերի դասավորման սկզբունքները.				3	Հղում 3, կետ 18	տեսողական	
13.	Դեղերի պահպանման ֆիզիկոքիմիական առանձնահատկությունները՝ նշում 4							
13.1	Լույսի ազդեցությունից պաշտպանում պահանջող դեղերը պահվում են լուսապաշտպան նյութից պատրաստված տարայում (նարնջագույն ապակուց պատրաստված, մետաղից պատրաստված տարաներում, ալյումինե փաթեթավորման նյութերում կամ սև, սրճագույն, նարնջագույն ներկված				3	Հղում 3. գլուխ 4. կետ՝ 26, կետ 27.	տեսողական	

	պոլիմերային նյութերով փաթեթներում), մութ սենյակում կամ դռները ամուր փակվող, ներսից սև գույնի ներկված պահարաններում և/կամ ամուր փակվող կափարիչով, խիտ խփված փայտերով արկղերում:							
13.2	Խոնավության ազդեցությունից պաշտպանում պահանջող դեղերը պահվում են չոր տեղում, լավ փակված տարաներում:				3	Հղում 3.գլուխ 5. Կետ 30, 31, 32	տեսողական	
13.3	Ցնդող դեղերը պահվում են սառը տեղում, ցնդող նյութերի համար անթափանց նյութից պատրաստված և հերմետիկորեն փակված տարայում (ապակյա, մետաղյա, ալյումինե փայլաթուղթ):				3	Հղում 3., գլուխ 6. Կետ 34, 35	տեսողական	
13.4	Բարձր ջերմաստիճանի ազդեցությունից պաշտպանում պահանջող դեղերը պահվում են սառնարանում:				3	Հղում 3. գլուխ 7. Կետ37,38,39,40,41,42, 43	տեսողական	
13.5	Ցածր ջերմաստիճանի ազդեցությունից պաշտպանում պահանջող դեղերը պահվում են սենյակային ջերմաստիճանում:				3	Հղում 3, գլուխ 8, կետ՝ 45. 46. 47.	տեսողական	
13.6	Գազերի ներգործությունից փոփոխվող դեղերը պահվում են հերմետիկ խցանված, գազերի համար անթափանց նյութից պատրաստված, հնարավորին չափ լիքը լցված տարայում:				3	Հղում 3., գլուխ 9. կետ՝ 49. 50. 51.	տեսողական	
13.7	Հրավտանգ և պայթյունավտանգ դեղանյութեը պահվում են մեկուսացված, այնպիսի պայմաններում՝ որոնք բացառում են օդի, ջրի, այրվող նյութերի հետ շփումը, ինչպես նաև արևի ճառագայթների ազդեցության նման շփման հնարավորությունները:				3	Հղում 3., գլուխ 9. կետ՝ 67, 68-94	տեսողական	
13.8	Հոտավետ դեղերը պահվում են մեկուսացված, հոտի համար անթափանց, հերմետիկորեն փակված տարայում առանձին՝ ըստ անվանումների:				3	Հղում 3., գլուխ 10. Կետ 54,	տեսողական	
13.9	Ներկող դեղերը պահվում են ամուր խցանված տարայում, հատուկ պահարաններում, առանձին անվանումներով:				3	Հղում 3. գլուխ 10. Կետ 55՝	տեսողական	
14.	Դեղերը պահվում են ըստ ֆարմակոլոգիական խմբերի՝ դրանց ուղեկցող փաստաթղթերում սահմանված դեղերի				3	Հղում 3, Գլուխ 11 կետ 56,	տեսողական, փաստաթղթային	

	պահպանման համար անհրաժեշտ ջերմային ռեժիմում և համապատասխան լուսավորության ու խոնավության պայմաններում:					Հղում 2, Հավելված N 3, Կետ 37		
15.	Բոլոր պատրաստի դեղերը.							
15.1	Դասավորվում են օրիգինալ փաթեթներով, պիտակը (մակնշումը)՝ դեպի դուրս:				3	Հղում 3, Գլուխ 11 կետ 57	տեսողական	
15.2	Դեղահաբերը և շաքարապատ դեղահատերը պահվում են այլ դեղաձևերից մեկուսացված, գործարանային փաթեթներում, չոր, լույսից պաշտպանված տեղում:				3	Հղում 3., Գլուխ 11 կետ 58	տեսողական	
15.3	Ներարկման դեղաձևերը պահվում են սառը, լույսից պաշտպանված տեղում, առանձին պահարանում կամ մեկուսացված սենյակում:				3	Հղում 3., Գլուխ 11 կետ 60	տեսողական	
15.4	Հեղուկ դեղաձևերը (օշարակներ, հանուկներ) պահվում են հերմետիկ խցանված սառը և լույսից պաշտպանված տեղում:				3	Հղում 3., Գլուխ 11 կետ 61	տեսողական	
15.5	Պլազմային փոխարինող և թունազերծող լուծույթները պահվում են առանձին՝ 0-ից մինչև 40^0C-ի սահմաններում, լույսից պաշտպանված տեղում:				3	Հղում 3., Գլուխ 11 կետ 62	տեսողական	
15.6	Մզվածքները (էքստրակտները) պահվում են պտուտակվող կափարիչով և միջնաշերտ ունեցող խցանով փակվող ապակյա տարայում, լույսից պաշտպանված տեղում: Հեղուկ և պինդ մզվածքները պահված են $+12^0$-ից $+15^0$C-ի սահմաններում:				3	Հղում 3., Գլուխ 11 կետ 63	տեսողական	
15.7	Քսուքները, հեղուկաքսուքները (լինիմենտները) պահվում են ամուր խցանված տարայում, սառը, լույսից պաշտպանված տեղում:				3	Հղում 3., Գլուխ 11 կետ 64	տեսողական	
15.8	Դեղամոմիկները պահվում են չոր, սառը, լույսից պաշտպանված տեղում:				3	Հղում 3., Գլուխ 11, Կետ 65	տեսողական	
15.9	Ցողացիրները պահվում են $+3^0$C-ից $+20^0$C ջերմաստիճանում, չոր, լույսից պաշտպանված տեղում, կրակից և տաքացնող սարքերից հեռու՝ պահպանելով հարվածից և մեխանիկական վնասումներից:				3	Հղում 3.Գլուխ 11, կետ 66	տեսողական	

16.	Առկա չեն պիտանիության ժամկետն անցած դեղեր:				3	Հղում 1.	տեսողական	
17.	Առկա չեն չգրանցված դեղեր: Որոշիչ				3	Հղում 1. Հոդված 4. պարբերություն 3	տեսողական,	
18.	Առկա չեն կեղծ դեղեր: Որոշիչ				3	Հղում 1.	Տեսողական, լաբորատոր հետազոտություն	
19.	Թմրամիջոցների և հոգեմետ նյութեր պարունակող դեղերի պահպանման առանձնահատկությունները՝ Նշում 5							
19.1	Թմրամիջոցները պահվում են հատակին ամրացված չիրկիզվող պահարաններում:				3	Հղում 4. Գլուխ II, Կետ 11, Ենթակետ 2)	տեսողական	
19.2	Հոգեմետ նյութերի պահպանման համար ունեն երկաթյա պահարան, որը տեղակայված է հատուկ դրա պահպանման համար նախատեսված վանդակաճաղերով պատուհաններով և երկաթյա դուռ ունեցող սենյակում, որն ապահովված է ձայնային ահազանգման համակարգով:				3	Հղում 6. Կետ 16	տեսողական	
19.3	Ազդանշանային սարքավորումների էլեկտրասնուցման համակարգը ունի պահեստային էլեկտրասնուցման աղբյուր:				3	Հղում 2, Հավելված N 3, Կետ 19	տեսողական	
19.4	Հոգեմետ նյութեր պարունակող դեղերի դեղատոմսերը դեղատանը պահվում են 1 տարի:				3	Հղում 6., Կետ 7.	Տեսողական, փաստաթղթային	
19.5	Դեղատանը առկա են թմրադեղեր և հոգեմետ նյութեր պարունակող դեղերի հաշվառման մատյաններ:				3	Հղում 5. Կետ 7.	Տեսողական, փաստաթղթային	

19.6	Մատյանի ձևը համապատասխանում է սահմանված պահանջներին: նշում 6				3	Հղում 5. Կետ 7.	Տեսողական	
19.7	Դեղատանը առկա են դեղատոմսերի ոչնչացման ակտեր: նշում 6				3	Հղում 5., Կետ 6.	Տեսողական	
20.	Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների պատրաստի արտադրանքի հաշվառումն իրականացվում է կարված, էջակալված և կնքված հաշվառման գրքում, որտեղ լիարժեք արտացոլվում է ամենօրյա պատրաստի արտադրանքի շարժը:				3	Հղում 6, Կետ 6	փաստաթղթային	
21.	Դեղագործական գործունեությամբ զբաղվող աշխատակիցները փաստացիորեն հանդիսանում են դեղագետ կամ դեղագործ:				1	Հղում 1, Հոդված 2,	փաստաթղթային	
22.	Դեղատանը վաճառվում են միայն դեղեր, բժշկական նշանակության, հիվանդի խնամքի, ինչպես նաև սանիտարիայի և հիգիենայի ապրանքներ:				3	Հղում 7, կետ 1.5	տեսողական	
23.	Պատերը երեսպատված են խոնավ մաքրում և ախտահանում իրականացնելու հնարավորություն ընձեռող մակերեսներով:				3	Հղում 7, կետ 3.2	տեսողական	
24.	Հատակը երեսպատված է խոնավ մաքրում և ախտահանում իրականացնելու հնարավորություն ընձեռող մակերեսով:				3	Հղում 7, կետ 3.2	տեսողական	
25.	Արևային կողմի լուսամուտները և ցուցափեղկերը ունեն արևապաշտպան հարմարանքներ, որոնք օգտագործվում են հատկապես ամռան ամիսներին:				2	Հղում 7, կետ 3.4	տեսողական	
26.	Առևտրի սրահ-սպասասրահում անձնակազմի աշխատատեղերը ապահովված են օդակաթիլային ճանապարհով փոխանցվող վարակիչ				3	Հղում 7, կետ 3.6	տեսողական	

	հիվանդություններից պաշտպանող հարմարանքներով:							
27.	Խմելու ջրի որակը համապատասխանում է սանիտարական նորմերի և կանոնների պահանջներին: նշում 7 Որոշիչ				3	Հղում 8, կետ 2.1	լաբորատոր հետազոտություն	
28.	Անձնակազմի աշխատողների ձեռքերը լվանալու համար լվացարանային կոնքին կից տեղադրված է ախտահանիչ լուծույթով տարողություն:				3	Հղում 7, կետ 3.8	տեսողական	
29.	Ախտահանիչ լուծույթները պատրաստված են պահանջվող տոկոսայնությամբ: նշում 8				2	Հղում 7, Հավելված 1	լաբորատոր՝ սանիտարա-քիմիական հետազոտություն	
30.	Սենքերը, ձեռքերի լվացման խեցին և սանիտարական հանգույցը մաքրվում են խոնավ եղանակով՝ լվացող և ախտահանիչ նյութերի օգտագործմամբ:				2	Հղում 7, կետ 5.2, 5.3, 5.4, 5.5	Տեսողական, հարցման միջոցով	
31.	Խոնավ եղանակով մաքրումը կատարվում է պահպանելով սահմանված հաճախականությունը: նշում 8				2	Հղում 7, կետ 5.2, 5.3, 5.4, 5.5	Տեսողական, հարցման միջոցով	
32.	Ախտահանման ենթակա մակերեսներից վերցված լվացուկների մանրէաբանական հետազոտության արդյունքում շեղումներ չեն արձանագրվել:				3	Հղում 7, կետ 10	լաբորատոր հետազոտություն	
33.	Աշխատողները տիրապետում են ձեռքերի լվացման և ախտահանման կարգին: նշում 9				3	Հղում 7, կետ 6.2	Տեսողական, հարցման միջոցով	
34.	Աշխատողների ձեռքերից վերցված լվացուկների մանրէաբանական հետազոտության արդյունքում շեղումներ չեն արձանագրվել:				3	Հղում 7, կետ 10	լաբորատոր հետազոտություն	

35.	Կենցաղային աղբը հավաքում են տարողություններում:				3	Հղում 7, կետ՝ 5.7	Տեսողական	
36.	Տարողությունները ունեն կափարիչ:				2	Հղում 7, կետ՝ 5.7	Տեսողական	
37.	Դեղատան աշխատողները պահպանում են անձնական հիգիենայի հետևյալ կանոնները.					Հղում 7, կետեր 6.1, 6.2, 6.3, 6.4, 4.6	Տեսողական	
37.1	Դեղերի պատրաստումով, հսկողությամբ, մանրակշռումով զբաղվող անձանց եղունգները կարճ կտրած է, չեն կրում մատանիներ և լաքապատում եղունգները:				2			
37.2	Դեղատան աշխատողները սանիտարական հագուստը փոխում են շաբաթը մեկ անգամ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ավելի հաճախ:				2			
37.3	Դեղերի պատրաստումով, մանրակշռումով զբաղվող աշխատողներին հերթափոխից առաջ հատկացվում են անհատական օգտագործման սրբիչներ:				2			
37.4	Աշխատողները աշխատանքի ընթացքում կրում են սանիտարական հագուստ (խալաթ, գլխարկ) ու սանիտարական կոշիկներ:				2			
37.5	Ասեպտիկ կառույցահատվածից դուրս չեն գալիս մանրէազերծված սանիտարական հագուստով:				2			
38.	Աշխատողները ունեն ոչ պակաս, քան 2 կոմպլեկտ սանիտարական հագուստ:				2	Հղում 7, կետեր 6.1, 6.3	Տեսողական	
39.	Տարբեր սենյակների (առևտրի սրահ, սանիտարական հանգույց, գրասենյակ) մաքրման համար առանձնացվում է մակնշված մաքրման գույք (դույլեր, թասեր, խոզանակներ, լաթեր և այլն):				2	Հղում 7, կետեր 5.6	Տեսողական	
40.	Մաքրման գույքը պահվում է հատուկ առանձնացված				2	Հղում 7, կետեր 5.6	Տեսողական	

	տեղերում (սենյակ, պահարան):							
41.	Կազմակերպության տնօրենը ընդունել է բժշկական /դեղագործական և քիմիական/ թափոնների անվտանգ գործածությունը կարգավորող գործողությունների իրավական ակտ:				3	Հղում 9, կետեր 12, 13	փաստաթղթային	
42.	Ակտում ներառված է բժշկական թափոնների շարժի պատկերը արտացոլող աղյուսակը /գծագիրը/՝ որտեղ նշված են թափոնների առաջացման, պահման վայրերը, նկարագրվում են բժշկական թափոնները տարողությունների և բեռնարկղների մեջ տեղադրման, մակնշման, մեկուսացման, տեղափոխման, վնասազերծման փուլերի իրականացումը և մյուս պահանջները:				2	Հղում 9, կետեր 12, 13	փաստաթղթային	
43.	Առկա է կազմակերպության տնօրենի հրամանը՝ բժշկական թափոնների կառավարման պատասխանատու անձ /հանձնաժողով/ նշանակելու և պարտականությունները սահմանելու մասին:				2	Հղում 9, կետ 13, 16, 17	փաստաթղթային	
44.	Բժշկական թափոնները գոյացման վայրում անմիջապես առանձնացվել են և տեղադրել բեռնարկղների մեջ:				2	Հղում 9, կետ 19, 24, 25	Տեսողական	
45.	Կազմակերպությունը ունի բժշկական թափոնի ժամանակավոր պահման հատուկ տարածք:				2	Հղում 9, կետ 34	Տեսողական	
46.	Բժշկական թափոնները տարողությունների և բեռնարկղների մեջ տեղադրելուց հետո անմիջապես տեղափոխվել են ժամանակավոր պահման հատուկ տարածք:				2	Հղում 9, կետ 19, 24, 25	Տեսողական	

47.	Տարողությանը ամրացված է լրացված պիտակ՝ որի վրա նշված է տեղադրված թափոնի տեսակը, դրա՝ տարողությունում տեղավորելու օրը, ամիսը, տարեթիվը, իր անունը և ազգանունը, ինչպես նաև կազմակերպության անվանումը:				2	Հղում 9, կետ 25	Տեսողական	
48.	Կազմակերպությունը ունի բժշկական թափոնի տեղափոխման և վնասազերծման համար պայմանագիր որևէ լիցենզավորված կազմակերպության հետ:				2	Հղում 9, կետեր 42	փաստաթղթային	
49.	Վարվում են հատուկ մատյաններ՝ բժշկական թափոնի գոյացման տեղում և ժամանակավոր պահման հատուկ տարածքում:				2	Հղում 9, կետեր 37, 38	փաստաթղթային	
50.	Բժշկական թափոնի գոյացման վայրում վարվող մատյանում նշվում է բժշկական թափոնի տեսակը, դրա հավաքման և գոյացման տեղից հեռացման ամսաթիվը:				2	Հղում 9, կետեր 37, 38	փաստաթղթային	
51.	Բժշկական թափոնի ժամանակավոր պահման հատուկ տարածքում վարվող մատյանում նշվում է թափոնի տեսակը, դրա ժամանակավոր պահման հատուկ տարածքում տեղադրման սկիզբը և ժամանակավոր պահման հատուկ տարածքից փոխադրելու ամսաթիվը:				2	Հղում 9, կետեր 37, 38	փաստաթղթային	
52.	Մատյանները համարակալված և կնքված են կազմակերպության տնօրենի կողմից:				2	Հղում 9, կետեր 37, 38	փաստաթղթային	
53.	Աշխատողները, որոնք զբաղված են դեղամիջոցների իրացմամբ ունեն առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության գրքույկ, որը Նշում 10					Հղում 10, Հավելված 2, կետ 7	փաստաթղթային	
53.1	համապատասխանում է պահանջվող ձևին:				2			

53.2	պահպանվում է հետազոտությունների ծավալները				3			
53.3	պահպանվում է հետազոտությունների պարբերականությունը				3			
54.	Աշխատողները, որոնք զբաղված են դեղամիջոցների պատրաստմամբ ունեն առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության գրքույկ, որը Նշում 10					Հղում 10, Հավելված 2, կետ 6	փաստաթղթային	
54.1	համապատասխանում է պահանջվող ձևին:				2			
54.2	պահպանվում է հետազոտությունների ծավալները				3			
54.3	պահպանվում է հետազոտությունների պարբերականությունը				3			
55.	Դեղատան ամանեղենի լվացման սենյակում առանձնացված են, պիտակավորված լվացման խեցիներ՝ ներարկման լուծույթների, աչքի կաթիլների, ներքին և արտաքին օգտագործման դեղաձևերի համար օգտագործվող ամանեղենի համար:				2	Հղում 7, կետ՝ 3.9	Տեսողական	
56.	Դեղատնային ամանեղենը լվացվում է սահմանված կարգով: **նշում 11**				3	Հղում 7, կետ՝ 8.4., Հավելված 3	Տեսողական, հարցում	
57.	Լվանալուց հետո դեղատնային ամանեղենի լվացման և ամանեղենի մաքրության աստիճանը, դրանց վրա լվացող նյութերի մնացորդների առկայությունը ստուգվում է սահմանված կարգով: **նշում 12**				2	Հղում 7, կետ՝ 8.4, հավելված 5	Տեսողական, հարցում	
58.	Դեղերի պատրաստման համար օգտագործվող օժանդակ նյութեր (բամբակ, մառլյա, մագաղաթյա թուղթ, ֆիլտր).					Հղում 7, կետ՝ 8.3.	Տեսողական, հարցում	
58.1	մանրէազերծվում են բիքսերում կամ հղկված խցանով հարմարեցված անոթներում:				2			
58.2	պահում են փակ վիճակում՝ 3 օրից ոչ ավելի:				3			
58.3	Բացված տարողություններում պահվող օժանդակ նյութը օգտագործում են 24 ժամվա ընթացքում:				3			
59.	Բալոնները.					Հղում 7, կետ՝ 8.5, 9.4,	Տեսողական, հարցում	

59.1	Մանրէազերծում են գոլորշիով, 30 րոպե տևողությամբ:				3			
59.2	Մանրէազերծումից հետո փակվում են մանրէազերծված թղթով:				3			
59.3	Մանրէազերծումից հետո պահվում են 24 ժամից ոչ ավելի:				3			
60.	Մանրէազերծված ամանեղենը պահպանվում է.					Հղում 7, կետ՝ 8.3, 8.4, 9.4	Տեսողական, հարցում	
60.1	Չմանրէազերծված դեղաձևերի պատրաստման համար օգտագործվող մանրէազերծված ամանեղենը պահպանվում է երեք օրից ոչ ավել:				3			
60.2.	Ասեպտիկ պայմաններում դեղերի պատրաստման և մանրակշռման համար օգտագործվող մանրէազերծված ամանեղենը պահվում է 24 ժամից ոչ ավելի:				3			
60.3	Մանրէազերծված դեղատնային ամանեղենը պահվում է ամուր փակվող պահարաններում:				2			
61.	Փակիչները, խցանները, կափարիչները.							
61.1	պահվում են դրանց աղտոտումը բացառող պայմաններում:				2	Հղում 7, կետ՝ 8.6	Տեսողական	
61.2	Մանրէազերծված խցանները պահում են փակ բիքսերում 3 օրից ոչ ավելի:				3	Հղում 7, հավելված 6	Տեսողական	
62.	Լուծույթների տարողությունների փակման խցանների և ալյումինե կափարիչների, դեղորայքային լուծույթների տարողությունների փակման խցանների, ալյումինե կափարիչների, պոլիէթիլենային, պլաստմասսայից պտուտակավոր խցանների մշակումը կատարվում է սահմանված կարգով: **Նշում** 13				3	Հղում 7, կետ՝ 4.7, 9.5, հավելված 6, 7 և 8	Տեսողական, հարցում	
63.	Դեղերի լուծույթների պատրաստման համար օգտագործվող տեխնոլոգիական սարքավորումների հանվող մասերը (ռետինե և ապակե խողովակներ, ֆիլտրների բռնիչներ, մեմբրանային ֆիլտրներ, ներդիրներ և այլն), դեղատնային ամանեղենը, օժանդակ նյութերը (բամբակ, մառլյա, մագաղաթյա թուղթ, ֆիլտր և այլն), հավանգները, շտանգլասները				3	Հղում 7, կետ՝ 8.3, 8.4, 8.7, 9.2, 9.4, 9.12, Հավելված 2	Տեսողական, հարցում	

	մանրէազերծվում են սահմանված կարգով: **Նշում 14**							
64.	Քսուքների պատրաստումից հետո ճարպի մնացորդները հեռացնում են ստվարաթղթի, լիգնինի միջոցով:				2	Հղում 7, կետ՝ 9.12	Տեսողական	
65.	Հերթափոխից հետո կշեռքները, մածկաթիակները (շպատելները), մկրատները և դեղատնային մյուս մանր գործիքները սրբում են ջրածնի պերօքսիդի 3%-անոց լուծույթով:				2	Հղում 7, կետ՝ 9.7.	Տեսողական, հարցում	
66.	Բյուրետային սարքերը և կաթոցիչները դատարկվում են կոնցենտրատներից, լվացվում մանանեխի փոշու և տաք ջրի (50^0-60^0C) կամ ջրածնի պերօքսիդի և 0,5%-անոց լվացող նյութի խառնուրդով, պարզաջրում թորած ջրով, ոչ պակաս, քան 10 օրը 1 անգամ:				2	Հղում 7, կետ՝ 9.8.	Տեսողական, հարցում	
67.	Բյուրետային սարքերի հեղուկաթափ ծորակները աշխատանքից առաջ մաքրվում են աղային նստվածքներից, մզվածքներից, ոգեթուրմերից և սրբում ջրածնի պերօքսիդի 3%-անոց լուծույթով:				2	Հղում 7, կետ՝ 9.8.	Տեսողական, հարցում	
68.	Դեղանյութի յուրաքանչյուր կշռումից և չափումից առաջ շտանգլասի բերանը և խցանը, ինչպես նաև ձեռքի կշեռքները սրբում են մառլյայից անձեռոցիկով, որն օգտագործվում է մեկ անգամ:				2	Հղում 7, կետ՝ 9.9.	Տեսողական, հարցում	
69.	Դեղերի պատրաստման համար օգտագործվող դեղամիջոցները պահվում են ամուր փակվող շտանգլասներում (կամ այլ տարայում), դրանց աղտոտումը բացառող պայմաններում				2	Հղում 7, կետ՝ 9.1.	Տեսողական,	
70.	Մանրէաբանական հսկողության համար վերցված անձնակազմի հագուստից, սենյակների և սարքավորումների մակերեսներից, միջանկյալ և պատրաստի դեղորայքի հետազոտության արդյունքում շեղումներ չեն արձանագրվել:				3	Հղում 7, կետ՝ 10.	լաբորատոր	
71.	Մանրէազերծված ու չմանրէազերծված դեղամիջոցների պատրաստման համար օգտագործվում է մաքրված ջուր, որը ստացվում է կրկնակի թորման, կամ հետադարձ օսմոսի, կամ իոնային փոխանակության եղանակներով:				3	Հղում 7, կետ՝ 7.2	Տեսողական,	

72.	Օգտագործումից առաջ թորման սարքի միջով անց է կացվում գոլորշի՝ 20-30 րոպե տևողությամբ, առանց այն սառեցնելու: Թորած ջրի առաջին 40-60 լիտրը չեն օգտագործում:				3	Հղում 7, կետ՝ 7.3	Տեսողական, Հարցում	
73.	Ստացված թորած ջուրը հավաքվում է մաքուր, մանրէազերծված կամ գոլորշիով մշակված հավաքման սարքում կամ ապակե տարողությունում:				3	Հղում 7, կետ՝ 7.5	Տեսողական, Հարցում	
74.	Հավաքման տարաները ունեն "Թորած ջուր", պիտակավորումը:				2	Հղում 7, կետ՝ 7.5	Տեսողական	
75.	Հավաքման ապակե տարաները ամուր փակվում են խցաններով կամ կափարիչներով:				2	Հղում 7, կետ՝ 7.6	Տեսողական	
76.	Հավաքման ապակե տարաների 2 անցքերի /մեկը՝ ջրի մուտքի խողովակի, իսկ մյուսը՝ ապակե խողովակի համար/, մեջ դրվում է մանրէազերծված բամբակե վիրախծուծ (տամպոն), որը փոխվում է ամեն օր:				2	Հղում 7, կետ՝ 7.7	Տեսողական, Հարցում	
77.	Հավաքման տարայի պոլիմերային նյութերից պատրաստված խողովակաշարը մանրէազերծվում է ջրածնի պերօքսիդի 6%-ոց լուծույթով՝ 6 ժամ տևողությամբ, այնուհետև լվացվում թորած ջրով:				3	Հղում 7, կետ՝ 7.11	Տեսողական, Հարցում	
78.	Ապակե խողովակները և անոթները պիրոգեն նյութերից մաքրելու համար մշակում են կալիումի պերմանգանատի 1%-անոց լուծույթով, 25-30 րոպե տևողությամբ: **նշում 15**				2	Հղում 7, կետ՝ 7.12	Տեսողական, Հարցում	
79.	Թորած ջուրը պահվում է ասեպտիկ պայմաններում, երեք օրից ոչ ավելի:				3	Հղում 7, կետ՝ 7.15	Տեսողական, Հարցում	
80.	Ներարկման համար օգտագործվող թորած ջուրը պահվում է ասեպտիկ պայմաններում, 24 ժամից ոչ ավելի:				3	Հղում 7, կետ՝ 7.16	Տեսողական, Հարցում	
81.	Ասեպտիկ պայմաններում դեղերի պատրաստման պահանջները պահպանվում են՝							
81.1	Ասեպտիկ կառույցահատվածում, պատրաստուկի, ջրի թորման, մանրէազերծման սենյակներում օդի վարակազերծման համար դրված են չէկրանավորված կամ էկրանավորված մանրէազերծիչ ճառագայթիչներ:				3	Հղում 7, կետ՝ 4.3	Տեսողական,	

81.2	Ասեպտիկ կառույցահատված բերվող բոլոր սարքավորումները, կահույքը նախապես մշակվում են ախտահանիչ լուծույթով թրջված լաթով՝ սահմնված կարգով:				3	Հղում 7, կետ՝ 4.4	Տեսողական, Հարցում	
81.3	Ասեպտիկ կառույցահատվածում չօգտագործվող սարքավորումներ չեն տեղակայում:				2	Հղում 7, կետ՝ 4.4	Տեսողական	
81.4	Դեղերի պատրաստման սենյակի մուտքի առաջ փռված է ռետինե գորգ, որը հերթափոխի ընթացքում մեկ անգամ թրջվում է ախտահանող լուծույթով՝ սահմանված կարգի համաձայն: **նշում 8**				2	Հղում 7, կետ՝ 4.5.	Տեսողական	
81.5	Ասեպտիկ կառույցահատվածը (պատրաստուկի սենյակ) կից սենյակներից բաժանված է անցախուցով (շլյուզ):				2	Հղում 7, կետ՝ 4.6.	Տեսողական	
82.	Աշխատակիցները շլյուզ մտնելուց առաջ հագնում են հատուկ կոշիկներ, լվանում և ախտահանում են ձեռքերը, հագնում են մանրէազերծված խալաթ, գլխարկ (մազերը խնամքով հավաքում են), բախիլներ, բերանը և քիթը ծածկում քառատակ մառլայից պատրաստված դիմակով, որը փոխվում է 4 ժամը մեկ անգամ:				2	Հղում 7, կետ՝ 4.6	Տեսողական	
83.	Ասիստենտական-ասեպտիկ բաժանմունքով չեն անցնում ջրահեռացման և ջրմուղի խողովակներ:				2	Հղում 7, կետ՝ 4.10	Տեսողական	
84.	Խիտ լուծույթները, կիսաֆաբրիկատները, ներդեղատնային կիսահումքերը պատրաստվում են ասեպտիկ պայմաններում և պահվում են դրանց ֆիզիկաքիմիական հատկություններին և պիտանիության ժամկետներին համապատասխան, աղտոտումը բացառող պայմաններում:				2	Հղում 7, կետ՝ 8.8	Տեսողական,	
85.	Պարբերաբար, ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ, իրականացվում է օդի մանրէազրկվածության հսկողություն: **Նշում** 16.				3	Հղում 7, կետ՝ 4.11, Հղում 11	փաստաթղթային	

Հղում 1. «Դեղերի մասին» 27.10.1998թ ՀՀ օրենք

Հղում 2. «Հայաստանի Հանրապետությունում դեղատնային գործունեության իրականացման լիցենզավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.06.2002թ N867 որոշում

Հղում 3. «Դեղերի փոխադրման, պահեստավորման և պահպանման կարգը սահմանելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 09.09.2010թ N17-N հրաման

Հղում 4. «Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ ՀՀ կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների արտադրության, արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի իրականացման լիցենզավորման կարգերը և այդ գործունեությունների իրականացման լիցենզիայի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.03.2011 թ N281-Ն որոշում:

Հղում 5. «ՀՀ տարածքում դեղատոմսերի դուրս գրման և դեղերի բաց թողման կարգը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 26.02.2001թ N 100 հրաման

Հղում 6. ՀՀ կառավարության 18 մարտի 2010 թվականի «Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» N 270-Ն որոշում:

Հղում 7. ՀՀ առողջապահության նախարարի 04.09.02թ. N 574 հրամանով հաստատված «Դեղատներին և դեղատնային կրպակներին ներկայացվող սանիտարական կանոններ» N2-III-2.2.7

Հղում 8. ՀՀ առողջապահության նախարարի 25.12.02 թ. N 876 հրամանով հաստատված «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա 2-1 սանիտարական նորմեր և կանոններ

Հղում 9. ՀՀ առողջապահության նախարարի 24.03.08թ. N 03-Ն հրամանով հաստատված_«Բժշկական թափոնների գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոններ և նորմեր

Հղում 10. ՀՀ կառավարության 2003թ. մարտի 27-ի «Առողջական վիճակի պարտադիր նախնական (աշխատանքի ընդունվելիս) և պարբերական բժշկական զննության կարգը, գործունեության ոլորտների, որոնցում զբաղված անձինք ենթակա են առողջական վիճակի պարտադիր բժշկական զննության և բժշկական զննության ծավալի ու հաճախականությունների ցանկը և անձնական սանիտարական (բժշկական) գրքույկի ու բժշկական զննության ենթակա անձանց անվանացանկի ձևերը հաստատելու մասին» թիվ 347-Ն որոշում

Հղում 11. «Մանկաբարձա-գինեկոլոգիական ստացիոնարներում (բուժկանխարգելում) ներհիվանդանոցային վարակի կանխարգելում և հակահամաճարակային համալիր միջոցառումների կազմակերպում և իրականացում» ՍՆ N 3.1.6-011-09

Նշում 1

Հիպոթերմիա առաջացնող փաթեթ (սառեցնող), բեկակալ, զարկերակային ճնշումը չափելու սարք (տոնոմետր), արյունահոսությունը դադարեցնող ձգալարան, մկրատ, մանրէազերծված բինտ, չմանրէազերծված բինտ, մանրէասպան կպչուն սպեղանի, էլաստիկ բինտ, կպչուն սպեղանի, բամբակ /խոնավածուծ, հիգրոսկոպիկ/

նշում 2

Առևտրի սրահի սպասասրահի, գրասենյակի տարածքները կարող են տարանջատված լինել շարժական պատերով՝ բացառությամբ սանհանգույցի:

Եթե հայտատուն լիցենզիա ստանալու մասին հայտում նշում է, որ չի պատրաստելու ստերիլ դեղեր, ապա նշված տարածքներից հանվում են դեղերի ստերիլիզացման և ստերիլ դեղերի պատրաստման սենյակների համար նախատեսված տարածքները.

Նշում 3

Sարածքներն ունեն գործառնական կապ, եթե գտնվում են միևնույն շենքի կամ շինության տարածքում, ունեն մեկ ընդհանուր մուտք, ընդ որում՝ տարբեր հարկերում լինելու դեպքում տեղակայված են իրար անմիջապես հաջորդող հարկերում:

նշում 4

կետ 14 Լույսի ազդեցությունից պաշտպանում պահանջող դեղերի թվին են պատկանում հակաբիոտիկները, գալենյան պատրաստուկները (թուրմերը, մզվածքները, դեղաբուսական հումքից ստացված խտանյութերը և այլն), դեղաբուսական հումքը, վիտամինային դեղապատրաստուկները, կորտիկոստերոիդները, եթարային յուղերը, ճարպայուղերը, շաքարապատ պատրաստուկները, յոդաջրածնական և բրոմաջրածնական թթուների աղերը, հալոգենային միացությունները, նիտրո և նիտրոզոմիացությունները, նիտրատները, նիտրիտները, ամինային, ամիդային և ֆենոլային միացությունները, ֆենթիազինի ածանցյալները:

Լույսի ազդեցությունից պաշտպանում պահանջող դեղերը պահվում են լուսապաշտպան նյութից պատրաստված տարայում (նարնջագույն ապակուց պատրաստված, մետաղից պատրաստված տարաներում, ալյումինե փաթեթավորման նյութերում կամ սեւ, սրճագույն, նարնջագույն ներկված պոլիմերային նյութերով փաթեթներում), մութ սենյակում կամ դռները ամուր փակվող, ներսից սև գույնի ներկված պահարաններում եւ/կամ ամուր փակվող կափարիչով, խիտ խփված փայտերով արկղերում:

Լույսի նկատմամբ խիստ զգայուն դեղանյութերը (արծաթի նիտրատ, պրոզերին եւ այլ) պահում են անլուսաթափանց, սեւ թղթով փաթաթված ապակյա տարայում:

Կետ 14.2 Խոնավությունից պաշտպանում պահանջող դեղերի թվին են պատկանում խոնավածուծ նյութերն ու պատրաստուկները՝ կալիումի ացետատը, չոր մզվածքները, դեղաբուսական հումքը, հիդրոլիզվող նյութերը, ազոտական, ազոտային հալոգենաջրզծնական և ֆոսֆորական թթուների աղերը, նատրիումի մետաղ-օրգանական միացությունները, գլիկոզիդները, հակաբիոտիկները, ֆերմենտները, չոր օրգանական պատրաստուկները, այն դեղանյութերը, որոնք ջրում հեշտությամբ են լուծվում, ինչպես նաև այն դեղանյութերը, որոնց խոնավության պարունակությունը չպետք է գերազանցի նորմատիվային փաստաթղթերով հաստատված սահմանը:Լ

Դեղի պիտակի վրա «Պահպանել խոնավությունից» գրառման դեպքում սովորական պահման պայմաններում հարաբերական խոնավությունը պետք է լինի ոչ ավելի, քան 60 %: Նման դեպքերում դեղը պացիենտին տրամադրվում է խոնավաանթափանց տարայի մեջ:

Ջրի, մթնոլորտային գոլորշիների ներգործությունից փչացող դեղերը պետք է պահել սառը տեղում, ամուր խցանված և ջրի գոլորշիների համար անթափանց նյութից պատրաստված տարայում (ապակյա, մետաղյա, ալյումինե ֆոլգայի, հաստ պատերով պլաստմասսայից տարաներում):

Այն դեղերը, որոնք ունեն խիստ խոնավածուծ հատկություններ (պիլոկարպինի հիդրոքլորիդ, բժշկական ժելատին, կալիումի քլորիդ և այլ), անհրաժեշտ է պահել չոր սենյակում, հերմետիկ խցանված և պարաֆինով վերևից լցված ապակյա տարայում: Այդպիսի դեղանյութերի տարան խցանելիս անհրաժեշտ է խնամքով մաքրել դրա բերանը և խցանը:

Եթե կարգի 28-րդ կետում նշված խմբի դեղերը պահեստ են տեղափոխվել պոլիմերային թաղանթով փաթեթավորված, ապա նշված դեղերը անհրաժեշտ է պահել գործարանային փաթեթավորմամբ, իրացման ժամանակ տեղափոխելով ապակյա կամ մետաղական տարայի մեջ:

կետ 14.3 Ցնդող դեղերի խմբին են պատկանում՝

1) ինքնուրույն ցնդող նյութերը (բրոմկամֆորա, յոդ, կամֆորա, մենթոլ, թիմոլ, մեթիլսալիցիլատ),

2) ցնդող լուծիչ պարունակող դեղապատրաստուկները (սպիրտային հանուկները, հեղուկ սպիրտային խտանյութերը, խիտ մզվածքները),

3) ցնդող նյութերի լուծույթները և խառնուրդները (եթերային յուղերը, ամոնիակի, ֆորմալդեհիդի, քլորաջրածնի 13 %-ից բարձր, կարբոլաթթվի, էթիլ սպիրտի տարբեր խտության լուծույթները),

4) եթերային յուղեր պարունակող դեղաբուսական հումքը,

5) բյուրեղաջուր պարունակող պատրաստուկները՝ բյուրեղահիդրատները,

6) այն դեղերը, որոնց քայքայումից առաջանում են ցնդող նյութեր (յոդոֆորմ, ջրածնի պերօքսիդ, քլորամին Բ, նատրիումի հիդրոկարբոնատ),

7) խոնավության նվազագույն պարունակությամբ դեղերը (մագնեզիումի սուլֆատ, նատրիումի պարաամինոսալիցիլատ, նատրիումի սուլֆատ և այլն):
Ցնդող դեղերը պահվում են սառը տեղում, ցնդող նյութերի համար անթափանց նյութից պատրաստված և հերմետիկորեն փակված տարայում (ապակյա, մետաղյա, ալյումինե փայլաթուղթ): Պոլիմերային տարա և խցաններ թույլատրվում է օգտագործել Հայաստանի Հանրապետությունում ընդունված դեղագրքերի պահանջներին համապատասխան:
Կախված օդի հարաբերական խոնավությունից՝ բյուրեղահիդրատները կարող են ունենալ ինչպես խոնավածուծ, այնպես էլ ցնդող նյութերին բնորոշ հատկություններ: Ուստի դրանք անհրաժեշտ է պահել հերմետիկորեն խցանված, ապակյա, մետաղական կամ հաստ պատերով պլաստմասսայից տարայում, սառը տեղում, որտեղ օդի հարաբերական խոնավությունը 50-65 % է:
Կետ 14.4 Բարձր ջերմաստիճանի ազդեցությունից պաշտպանում պահանջող դեղերի թվին են պատկանում՝
1) այն դեղերը, որոնք պետք է պաշտպանել ցնդելուց և չորանալուց
2) դյուրահալ նյութերը,
3) իմունակենսաբանական դեղապատրաստուկները,
4) հակաբիոտիկները,
5) օրգանապատրաստուկները,
6) հորմոնային դեղապատրաստուկները,
7) վիտամինները և վիտամինային դեղապատրաստուկները,
8) գլիկոզիդներ պարունակող դեղապատրաստուկները,
9) բժշկական ճարպերը և յուղերը,
10) ճարպային հիմքերով քսուքները և այլ նյութեր:
Բարձր ջերմաստիճանից փչացող դեղերը պահվում են սենյակային ջերմաստիճանում (18-20^{0}C) և սառը պայմաններում (12-15^{0}C): Որոշ դեպքերում դրանք պահվում են ավելի ցածր ջերմաստիճանում, ինչի մասին նշվում է պիտակի վրա կամ դեղի օգտագործման հրահանգում: 0-15^{0}C ջերմաստիճան պահանջող դեղերը պահվում են սառնարանում: «Պահել 30^{0}C-ից ոչ բարձր ջերմաստիճանի պայմաններում» հրահանգի դեպքում անհրաժեշտ է ապահովել պահպանումը +2^{0}C-ից մինչև +30^{0}C ջերմաստիճանային սահմաններում, «Պահել 25^{0}C-ից ոչ բարձր ջերմաստիճանի պայմաններում»՝ +2^{0}C-ից մինչև +25^{0}C, «Պահել 15^0-ից ոչ բարձր ջերմաստիճանի պայմաններում»՝ +2^{0}C-ից մինչև +15^{0}C, «Պահել 15^{0}C-ից ոչ բարձր ջերմաստիճանի պայմաններում»՝ +2^{0}C-ից մինչև +15^{0}C, «Պահել 8^{0}C-ից ոչ բարձր ջերմաստիճանի պայմաններում»՝ +2^{0}C-ից մինչև +8^{0}C, «Պահել 8^{0}C-ից ոչ ցածր ջերմաստիճանի պայմաններում»՝ +8^{0}C-ից մինչև +25^{0}C:
Իմունակենսաբանական պատրաստուկները պահվում են գործարանային փաթեթավորմամբ, ըստ առանձին անվանումների՝ դեղի օգտագործման հրահանգում կամ պիտակի վրա նշված ջերմաստիճանային պայմաններում:
Միևնույն անվանում ունեցող իմունակենսաբանական պատրաստուկները պահվում են ըստ սերիաների՝ հաշվի առնելով պիտանիության ժամկետները:
Իմունակենսաբանական պատրաստուկները պահպանման ընթացքում ենթարկվում են տեսողական զննման ամիսը մեկ անգամից ոչ պակաս:
Հակաբիոտիկները պահվում են գործարանային փաթեթավորումով, սենյակային ջերմաստիճանում, եթե պիտակի վրա այլ ցուցումներ չկան:
Օրգանապատրաստուկները պահվում են մութ, չոր, սառը տեղում, 0^0-ից +15^{0}C պայմաններում, եթե պիտակի վրա կամ օգտագործման հրահանգում այլ ցուցումներ չկան:
«Օրորվի հեղուկը» պետք է պահել սառը տեղում: Պղտորվելիս ֆիլտրել և ստուգել դեղագրքի բոլոր պահանջներին համապատասխանությունը:
Կետ 14.5 Ցածր ջերմաստիճանի ազդեցությունից պետք է պահպանել այն դեղերը, որոնց ֆիզիկաքիմիական հատկությունները փոխվում են սառչելուց և չեն վերականգնում մինչև սենյակային ջերմաստիճանը տաքացնելը (օրինակ՝ ֆորմալդեհիդի 40%-անոց լուծույթը, ինսուլինի լուծույթը և այլն):

Ֆորմալդեհիդի 40 %-անոց լուծույթը (ֆորմալինը) և սառցային քացախաթթուն պահվում են +9^{0}C-ից ոչ ցածր ջերմաստիճանում: Նստվածք գոյանալիս դրանք պահում են սենյակային ջերմաստիճանում, մինչև նստվածքի լուծվելը, եթե չի լուծվում, հեղուկ մասը զգուշորեն դատարկում են և օգտագործում ֆորմալդեհիդի և քացախաթթվի փաստացի պարունակությանը համապատասխան:
Բժշկական ճարպայուղերը պահվում են +4-ից մինչև +12^{0}C-ի սահմաններում: Նստվածք գոյանալիս պահում են սենյակային ջերմաստիճանում, շոգեմշակում են և ստուգում դեղագրքի պահանջներին համապատասխան: Նստվածք առաջանալիս յուղերը բժշկական պրակտիկայում չեն օգտագործում:
Ինսուլին պարունակող դեղերի սառեցում չի թույլատրվում:
կետ 14.6 Շրջապատող միջավայրում գտնվող գազերի ներգործությունից փոփոխվող դեղերի խմբին են պատկանում.
1) օդի թթվածնի հետ փոխազդող նյութերը (ոչ սահմանային միջառանցքային կապերով խալիֆաթի շարքի տարբեր միացությունները, կողմնային խալիֆաթի խմբեր պարունակող ոչ սահմանային ածխածնային կապերով ցիկլից միացությունները, ֆենոլային, պոլիֆենոլային միացությունները, մորֆին և նրա հիդրոքսիլ խմբերով չտեղակալված ածանցյալները, ծծումբ պարունակող հետերոգենային և հետերոցիկլիկ միացությունները, ֆերմենտները և օրգանապատրաստուկները),
2) օդի ածխաթթու գազի հետ փոխազդող նյութերը, ալկալիական մետաղների և թույլ օրգանական թթուների աղերը (օրինակ՝ նատրիումի բարբիտալ, հեքսենալ և այլն), բազմատոմ ամիններ պարունակող պատրաստուկները (օրինակ՝ էուֆիլլինը), մագնեզիումի օքսիդը և գերօքսիդը, կծու նատրիումը, կծու կալիումը և այլն:
Գազերի ներգործությունից փոփոխվող դեղերը պահվում են հերմետիկ խցանված, գազերի համար անթափանց նյութից պատրաստված, հնարավորին չափ լիքը լցված տարայում:
Օդի թթվածնի ազդեցությունից հեշտությամբ օքսիդացող դեղերը պահվում են չոր սենյակում, հերմետիկ խցանված և պարաֆինով վերևից լցված ապակյա տարայում:
Բարբիտուրաթթվի նատրիումական աղերը պահպանվում են հերմետիկ խցանված, օդի ջրային գոլորշիների և ածխաթթու գազի համար անթափանց նյութից պատրաստված տարաներում:
Կետ 14.7 Կախված ֆիզիկաքիմիական հատկություններից՝
1) հրավտանգ դեղանյութերը ստորաբաժանվում են հետևյալ խմբերի.
ա. դյուրաբռնկվող
բ. դյուրավառ
2) պայթյունավտանգ դեղանյութերը ստորաբաժանվում են հետևյալ խմբերի.
ա. պայթուցիկ
բ. պայթյունավտանգ, որոնք ընդունակ են առաջացնել պայթուցիկ խառնուրդներ և խտացրած գազեր:
Հրավտանգ, պայթուցիկ խառնուրդներ առաջացնող դեղանյութերը պահվում են մեկուսացված, այնպիսի պայմաններում, որոնք լրիվ բացառում են օդի, ջրի, այրվող նյութերի հետ շփումը, ինչպես նաև արևի ճառագայթների ազդեցության նման շփման հնարավորությունները, ինչպես նաև բարձր ջերմաստիճանի և մեխանիկական ներգործության ազդեցությունը:
Հրավտանգ և պայթյունավտանգ դեղանյութերի պահպանման սենյակները պետք է լինեն մեկուսացված, չոր, արևի ճառագայթների ուղղակի ազդեցությունից, մթնոլորտային տեղումներից և գետնաջրերից պաշտպանված: Այդ սենյակներում, սահմանակից միջանցքներում, ինչպես նաև օժանդակ սենյակներում տեղադրվում են մեխանիկական ներհոս-արտամղիչ օդափոխիչ սարք:

Հրավտանգ (դյուրավառ) դեղանյութերի պահպանման սենյակները պետք է լինեն հրակայուն և դժվարությամբ այրվող նյութերից և գտնվեն այլ պահեստային շենքերից 20 մ-ից ոչ պակաս և բնակելի շենքերից՝ 50 մ հեռավորության վրա:

Հրավտանգ դեղանյութերի համար առանձին պահեստավորման սենյակներ չլինելու դեպքում, թույլատրվում է այդ նյութերը պահել ընդհանուր, չայրվող շինություններում, որոնք հարևան սենյակներից մեկուսացված են հրակայուն պատերով:

Հրավտանգ և պայթյունավտանգ դեղանյութերի պահպանման սենյակները պետք է կահավորել չայրվող, կայուն և համապատասխան ծանրության համար նախատեսված դարակաշարերով և ամանատակերով: Դարակաշարերը տեղադրվում են հատակից և պատերից 25 սմ հեռավորության վրա: Դարակաշարերի լայնությունը 1 մ-ից ավելի չպետք է լինի: Դարակաշարերի միջև եղած երկայնական անցատեղերը պետք է լինեն 1.35 մ-ից ոչ պակաս:

Էլեկտրահաղորդալարերը, լուսավորման և էլեկտրական սարքավորումները պետք է լինեն պայթյունաանվտանգ (էլեկտրալարերը թաքցված խողովակի մեջ, էլեկտրալամպերը հերմետիկ ամրանում)՝ անջատիչները և ավտոմատ կոճակները դուրս հանված միջանցք:

Հրավտանգ և պայթյունավտանգ նյութերի պահպանման համար նախատեսվում են մեկուսացված սենյակներ:

Դյուրաբռնկվող և այրվող նյութերի համար նախատեսված սենյակները պետք է տեղավորված լինեն առաջին հարկում, արտաքին պատի վրա ունենան 1.0 մ-ից ոչ պակաս լուսամուտախորշ, որի բարձրությունը կամ լայնությունը լինի 0,75 մ-ից ոչ պակաս, ունենա երկաթբետոնե ծածկ, չայրվող նյութերից պատեր, որոնց հրակայունության սահմանը լինի 0.75 ժամից ոչ պակաս, դռան մոտ թեքություն ունեցող ցեմենտված հատակ, դուռ, որի հրակայունության սահմանը լինի 0,6 ժամից ոչ պակաս, ունենա արտաքին ելք, շենքից դուրս կամ դեպի միջանցք՝ մեկուսացված:

Ոչ մեծ տարածքներ ունեցող կազմակերպություններում դյուրաբռնկվող և այրվող հեղուկները թույլատրվում է պահել չիրկիզվող պահարաններում, որոնց դռների լայնությունը պետք է լինի 0,7 մ-ից ոչ պակաս, բարձրությունը՝ 1,2 մ-ից ոչ պակաս: Պահարանը պետք է հեռու լինի ջերմարձակող մակերեսներից ու անցատեղերից և հնարավոր լինի ազատ մոտենալ դրան:

Այլ շենքերում տեղավորված պահեստներում, դեղատներում, դեղատնային կրպակներում չկշռաբաշխված վիճակում կարելի է պահել 100 կգ-ից ոչ ավելի հրավտանգ նյութեր:

100 կգ-ից ավելի քանակությամբ հրավտանգ նյութերը անհրաժեշտ է պահել ապակյա կամ մետաղյա տարայում, առանձին շենքում, մեկուսացված այլ խմբի հրավտանգ նյութերի պահպանության սենյակներից:

Չի թուլատրվում միևնույն սենյակում մի քանի դեղանյութերի միաժամանակյա կշռումը: Կշռողի աշխատատեղում օրական պահանջվող քանակությունից ավելի նյութեր չպետք է լինեն:

Հրավտանգ և պայթյունավտանգ նյութերի հիմնական պահպանության պահեստների դրսի պատերին, ինչպես նաև յուրաքանչյուր աշխատասենյակի և պահպանության սենյակի դռներին պետք է լինեն պարզ երևացող և չլվացվող մակագրություններ՝ «Հրավտանգ է», «Պայթյունավտանգ է», «Ծխելն արգելվում է», «Հրդեհի դեպքում զանգահարել ....»:

Դյուրաբռնկվող նյութերը (սպիրտ, սպիրտային լուծույթներ, սպիրտային և եթերային թուրմեր, մզվածքներ, եթեր, կաթնաթթու, քլորէթիլ, օրգանական յուղեր, ռենտգենյան ժապավեններ և այլն) և դյուրավառ նյութերը (վիրակապման միջոցներ, ծծումբ, գլիցերին, բուսական յուղեր, դեղաբուսական հումք և այլն) պահվում են այլ նյութերից առանձին, դրանց հետ աշխատելիս պահպանելով զգուշություն՝ անհրաժեշտության դեպքում տաքացնելով ջրային բաղնիքի կամ փակ պարուրակով էլեկտրասալիկի վրա:

Դյուրաբռնկվող հեղուկները պահվում են ամուր խցանված ապակյա կամ մետաղական տարայում, որպեսզի կանխվի անոթներից հեղուկների գոլորշիացումը:

Դյուրաբռնկվող և այրվող հեղուկներով շշերը, բալոնները և այլ խոշոր ծավալի անոթները պահվում են դարակաշարերի հարկերում մեկ շարքով: Չի թույլատրվում դրանք դասավորել մի քանի շարքով՝ օգտագործելով տարբեր միջադիր նյութեր: Չի թույլատրվում այդ նյութերի պահեստավորումը ջեռուցման սարքերի մոտ: Դարակաշարի կամ դարսվածքի և տաքացնող սարքի միջև եղած հեռավորությունը պետք է լինի 1 մ-ից ոչ պակաս:

Դյուրաբռնկվող և այրվող հեղուկներով շշերը պահվում են հարվածից պաշտպանող տարայում կամ բալոնաշրջիչներում:

Չի թույլատրվում դյուրաբռնկվող և այրվող հեղուկ նյութերը պահել լիքը լցված տարայում: Պետք է հեղուկը լցնել ծավալի 90 %-ից ոչ ավելի: Մեծ քանակությամբ սպիրտը պահվում է մետաղյա ամաններում, որոնք լցված են ծավալի 95 %-ից ոչ ավելի:

Չի թույլատրվում դյուրաբռնկվող նյութերը պահել միևնույն տեղում՝ հանքային թթուների, խտացված և հեղուկացված գազերի, դյուրավառ նյութերի, ինչպես նաև օրգանական նյութերի հետ պայթուցիկ խառնուրդներ առաջացնող անօրգանական աղերի հետ:

Բժշկական եթերը և նարկոզի համար օգտագործվող եթերը պահում են գործարանային փաթեթավորմամբ, մութ, սառը, կրակից և տաքացնող սարքերից հեռու տեղում:

Դյուրաբռնկվող հեղուկները օգտագործելիս պետք է պահպանել հատուկ զգուշություն՝ մշտապես ստուգելով տարայի հերմետիկությունը և սարքինությունը: Տարայի անսարքության դեպքում անհրաժեշտ է անհապաղ ձեռք առնել միջոցներ այն վերացնելու, կամ պարունակվող նյութը տեղափոխել սարքին տարայի մեջ:

Պայթուցիկ խառնուրդներ առաջացնող պայթյունավտանգ նյութերը (կալիումի պերմանգանատ, արծաթի նիտրատ) պահելիս անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ դրանք փոշուց աղտոտվելուց զերծ պահելու համար:

Պայթյունավտանգ նյութերով ամանները անհրաժեշտ է ամուր փակել, որպեսզի դրանց գոլորշիները օդ չթափանցեն:

Պայթյունավտանգ նյութերը չի թույլատրվում պահել դյուրավառ և այրվող նյութերի հետ միասին:

Կալիումի պերմանգանատը պահեստավորման սենյակներում պահվում է առանձնացված հատվածախցերում երկաթյա թմբուկներով, իսկ դեղատներում՝ հղկված խցաններ ունեցող շտանգլասներում, փոշուց, ծծմբից, օրգանական յուղերից, եթերներից, գլիցերինից, օրգանական թթուներից և այլ օրգանական նյութերից առանձին, քանի որ դրանց հետ փոխազդեցությունը պայթյունավտանգ է:

Նիտրոգլիցերինի լուծույթը պահվում է ոչ մեծ, լավ խցանված սրվակներում կամ մետաղյա անոթներում, սառը, մութ տեղում, պահպանելով կրակից նախազգուշանալու միջոցառումները:

Պայթյունավտանգ և հրավտանգ նյութերի պահպանության սենյակներում էլեկտրալուսավորման վթարի դեպքում, խստիվ արգելվում է սենյակ մտնել նավթի լամպով կամ մոմով: Այդպիսի դեպքերում անհրաժեշտ է օգտագործել միայն էլեկտրալապտերներ:

Կետ 14.8 Հոտավետ դեղերի թվին են պատկանում ինչպես ցնդող, այնպես էլ գործնականորեն չցնդող, բայց սուր հոտով նյութերը (ամոնիակի լուծույթ, յոդոֆորմ, կամֆորա, թիմոլ, ֆենոլ, մենթոլ, քլորամին Բ, եթերայուղեր): Հոտավետ դեղերը պահվում են մեկուսացված, հոտի համար անթափանց, հերմետիկորեն փակված տարայում առանձին՝ ըստ անվանումների:

Կետ 14.9 Ներկող դեղերի խմբին են պատկանում այն նյութերը և նրանց լուծույթները, խառնուրդները, պատրաստուկները և այլն, որոնք գունավոր հետք են թողնում տարաների, խցանների, սարքերի և այլ առարկաների վրա, որոնք չեն լվացվում սովորական սանիտարահիգիենիկ մշակմամբ (ադամանդյա կանաչ, մեթիլեն կապույտ, ինդիգո-կարմին, կալիումի պերմանգանատ, ռիբոֆլավին, ֆուրացիլին և այլն):

Ներկող դեղերը պահվում են ամուր խցանված տարայում, հատուկ պահարաններում, առանձին անվանումներով: Աշխատելիս յուրաքանչյուր դեղի համար առանձնացվում են հատուկ կշեռք, շպատել, հավանգ և այլ պարագաներ:

Նշում 5.

Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանած՝ դրանց պրեկուրսորների արտահանման կամ ներմուծման կամ մեծածախ առևտրի իրականացման գործունեության իրականացման լիցենզավորման համար անհրաժեշտ պայմաններն են՝

1) Հայաստանի Հանրապետություն կարող են ներմուծվել միայն Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ունեցող և ըստ քվոտաների հաշվարկված թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորներ.

2) լիցենզիա ստացած իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը պետք է ունենան թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ դրանց պրեկուրսորների պահպանման համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պայմաններին և պահանջներին համապատասխան տարածքներ՝ ներառյալ պահպանման համար պահեստը (բունկեր): Պահեստի դուռը պետք է լինի մետաղյա, պատուհանները՝ վանդակապատված: Պահեստում պետք է տեղադրված լինեն հատակին ամրացված չհրկիզվող պահարաններ: Պահեստը պետք է ունենա խոնավաչափ և պետք է սարքավորված լինի ազդանշանային համակարգով՝ ձայնային կամ լուսային ազդանշանը պահպանության դիտակետին միացնելով կամ շենքի արտաքին մասին ամրացնելով: Ազդանշանային սարքավորումների էլեկտրասնուցման համակարգը պետք է ունենա պահեստային էլեկտրասնուցման աղբյուր:

Նշում 6. Դեղատանը պահվում է թմրադեղերի և հոգեմետ դեղերի հաշվառման մատյաններ, որտեղ նշվում են դեղի անվանումը, ստացման ամսաթիվը, չափման միավորը, որտեղից է ստացված, փաստաթղթի համարը, քանակը, ում է բաց թողնվել հիվանդի Ա.Ա.Հ., դեղատոմսի համարը, քանակը և մնացորդը: Մատյանի էջերը պետք է լինեն կարված, և վավերացված կազմակերպության տնօրենի կնիքով:
Պահպանման ժամկետի ավարտից հետո դեղատոմսերը ոչնչացվում են՝ այրվում, կազմելով համապատասխան ակտ:

նշում 7

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԵՐ

Ցուցանիշներ	Չափման միավորներ	Նորմեր	Վնասակարության ցուցանիշ
Ընդհանուր α-ռադիոակտիվություն	Բկ/լ	0.1	ռադիաց.
Ընդհանուր β-ռադիոակտիվություն	Բկ/լ	1.0	-//-

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԶԳԱՅՈՐՈՇԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՆՈՐՄԵՐ

Ցուցանիշներ	**Չափման միավորներ**	**Նորմեր, ոչ ավելի**
Հոտ	բալեր	2
Համ	-//-	2

Գունավորում	աստիճաններ	20 /35/ 1)
Պղտորություն	ՖՊՄ (ըստ ֆորմազինի) պղտորության միավոր կամ մգ/լ (ըստ կաոլինի)	2.6 /35/ 1) 1.5 /2/ 1)

Նշում 8

Դեղատան սենյակների, կահույքի, առարկաների, սարքավորումների ախտահանման համար օգտագործվում են.

- - քլորամին Բ-ի 1%-անոց լուծույթ,
- - քլորամին Բ-ի 0,75 %-անոց լուծույթ (լվացող նյութի 0,5%-ի հետ),
- - ջրածնի պերօքսիդի 3%-անոց լուծույթ (լվացող նյութի 0,5%-ի հետ):
- Մշակման ձևը՝ կրկնակի մաքրում:

Սանիտարատեխնիկական սարքավորումները (կոնքեր) ախտահանվում են.

- - լվացող, ախտահանող միջոցներով, թույլատրված որևէ լվացող-ախտահանիչ նյութով թրջված լաթով, 5 րոպե տևողությամբ: Սրբում են առարկայի մակերեսը 0,5 գրամ նյութով կամ պատրաստուկով, 100 սմ^2 հաշվարկով,
- - թույլատրված մաքրող-ախտահանող պատրաստուկներով,
- - քլորամին Բ-ի 1%-անոց լուծույթով,
- - քլորամին Բ-ի 0,75%-անոց լուծույթով (լվացող նյութի 0,5%-ի հետ): Այս նյութերը օգտագործվում են մակերեսների կրկնակի մաքրման համար:

Մաքրման պարագաները ախտահանվում են.

- - քլորամինի 1%-անոց լուծույթով,
- - դիքլոր-1-ի 2%-անոց լուծույթով,
- քլորդեզինի 1%-անոց լուծույթով, ընկղմելով 60 րոպե տևողությամբ, որից հետո լվացվում և չորացվում են:

Հատակը լվացվում է հերթափոխը մեկ անգամից ոչ պակաս,

- պատերն ու դռները՝ շաբաթը մեկ անգամից ոչ պակաս:
- առաստաղը փոշուց մաքրվում է ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ՝ խոնավ լաթով,
- լուսամուտների ապակիների շրջանակները, դրանց միջև ընկած տարածությունները լվացվում են տաք ջրով, օճառով կամ լվացող նյութերով, ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ,
- առևտրի սրահի սարքավորումները մաքրվում են ամեն օր, դեղամիջոցների պահպանման սենյակների (նյութական սենյակներ) պահարանները՝ ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ:
- Ձեռքերի լվացման խեցիները և սանիտարական հանգույցները մաքրվում և ախտահանվում են ամեն օր:

Նշում 9

Անձնակազմը ձեռքերը օճառով լվանալուց հետո սրբում է հետևյալ լուծույթներում թրջված անձեռոցիկներով.

- էթիլ սպիրտի 30%-անոց լուծույթ,
- քլորհեքսիդինի բիգլյուկոնատի 70%-անոց լուծույթ էթիլ սպիրտում,
- քլորամին Բ-ի 0,5%-անոց լուծույթ (օգտագործվում է այլ լուծույթների բացակայության դեպքում):

Նշում 10.

Աշխատողները, որոնք զբաղված են դեղամիջոցների իրացմամբ անցնում են հետազոտություններ պալարախտի նկատմամբ և թերապևտի զննում՝ տարին 1 անգամ:

Աշխատողները, որոնք զբաղված են դեղամիջոցների փաթեթավորմամբ անցնում են հետազոտություններ՝

Թերապևտի / ընտանեկան բժշկի զննում/՝ աշխատանքի ընդունվելիս և հետագայում կիսամյակը 1 անգամ

Մաշկավեներաբանի զննում՝ աշխատանքի ընդունվելիս և հետագայում տարին 1 անգամ

Հետազոտություններ պալարախտի նկատմամբ՝ աշխատանքի ընդունվելիս և հետագայում տարին 1 անգամ

Արյան հետազոտություն՝ սիֆիլիսի, քսուք (քերուկ) սուսանակի, տրիխոմոնազի, քլամիդիոզի, ուրեոպլազմոզի նկատմամբ՝ աշխատանքի ընդունվելիս

Հետազոտություն աղիքային վարակիչ հիվանդությունների նկատմամբ (մանրէակրություն)՝ աշխատանքի ընդունվելիս և հետագայում կիսամյակը 1 անգամ

Հետազոտություններ հելմինթակրության նկատմամբ՝ աշխատանքի ընդունվելիս և հետագայում կիսամյակը 1 անգամ:

Ատամնաբույժի, քիթ-կոկորդ-ականջի մասնագետի զննում աշխատանքի ընդունվելիս և հետագայում կիսամյակը 1 անգամ:

Քիթ-ըմպանի ախտածին ստաֆիլոկոկի նկատմամբ՝ աշխատանքի ընդունվելիս և հետագայում կիսամյակը 1 անգամ:

Հայտնաբերված հիվանդները, ինչպես նաև մանրէակիրներն ուղարկվում են բուժման: Այդ անձանց իրավունք է տրվում զբաղվել դեղերի պատրաստումով, որակի հսկողությամբ, մանրակշռումով, դեղերի բաց թողնումով միայն լրիվ առողջացումից հետո, որի վերաբերյալ ներկայացվում է համապատասխան տեղեկանք բուժող հիմնարկից (կազմակերպությունից):

Նշում 11.

ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԱՄԱՆԵՂԵՆԻ ԼՎԱՑՄԱՆ ԿԱՐԳ

Փաթեթավորումից ազատված նոր կամ օգտագործված ամանեղենը (հիվանդանոցների վարակիչ բաժանմունքներից) ողողվում է ջրմուղի հոսող ջրով՝ արտաքինից և ներսից, աղտոտվածությունը և դեղանյութերի մնացորդները հեռացնելու համար, հետո թրջվում է մինչև 50^0-60^0C տաքացրած լվացող նյութի մեջ, 20-25 րոպե տևողությամբ: Շատ աղտոտված ամանեղենը թրջվում է ավելի երկար (2-3 ժամ):

Որպես լվացող միջոց թույլ է տրվում օգտագործել մանանեխի փոշու ջրային խառնուրդը՝ 1:20 հարաբերությամբ, «Դեզմոլի» 0,25%-անոց ջրային լուծույթը, սուլֆանոլի 1%-անոց լուծույթի խառնուրդը տրիպոլիֆոսֆատի լուծույթի հետ 1:9-ի հարաբերությամբ և այլ թույլատրված լվացող-ախտահանող միջոցներ:

Նշում 12.

ԱՄԱՆԵՂԵՆԻ ԼՎԱՑՄԱՆ ՈՐԱԿԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ Կ Ա Ր Գ

1. Լվացված ամանեղենի մաքրության աստիճանի ստուգումը.

լվացված և չորացված ամանեղենի ներքին մակերեսը թրջել 3-5 մլ ներկող նյութով: Հետազոտվող մակերեսի վրա այն տարածել՝ թափահարելով 10 վրկ, որից հետո ներկն արագ լվանալ ջրի շիթով: Լվացված ամանեղենը ունի առաջին աստիճանի մաքրություն, եթե դրա ներքին մակերեսի վրա բացակայում են դեղին բծերը և ճարպի հետքերը:

2. Ներկող նյութի պատրաստումը. 70 մլ մինչև 60^{0}C տաքացրած 90%-անոց էթիլ սպիրտում լուծել 0,2 գ սուդան 3, մանրեցրած ներկ և նույնքան էլ մեթիլեն կապույտ: Այնուհետև ավելացնել 10 մլ թորած ջուր և թափահարել: Լուծույթը պիտանի է 6 ամիս:

3. Լվացող նյութերի մնացորդների առկայության որոշումը.

ստուգվող լվացված սրվակը ողողել թորած ջրով (սրվակը լցվում է ջրով): Լվացուկով թրջված բամբակե վիրախծուծի վրա կաթեցնել 1-2 կաթիլ ֆենոլֆտալեինի սպիրտային լուծույթ: Լվացող նյութի մնացորդի առկայության դեպքում առաջանում է վարդագույն գունավորում:

Նշում 13

ՌԵՏԻՆԵ ԽՑԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԳ

1. Ռետինե նոր խցանները մշակվում են ձեռքով կամ մեքենայով, որևէ թույլատրված լվացող նյութի 0,5%-անոց տաքացրած (50^0-60^{0}C), խցանների կշռի և լվացող նյութի 1:5 հարաբերությամբ լուծույթում, 3 րոպե տևողությամբ: Այնուհետև 5 անգամ ողողվում ջրմուղի տաք ջրով, ամեն անգամ թարմացնելով այն, և 1 անգամ՝ թորած ջրով: 30 րոպե եռացնել նատրիում հիդրոկարբոնատի 1%-անոց լուծույթում, ապա ողողել մեկ անգամ ջրմուղի ջրով և 2 անգամ թորած ջրով: Տեղավորել ապակե անոթներում, վրան լցնել թորած ջուր, փակել և պահել գոլորշային մանրէազերծիչում, 121^{0}C ջերմաստիճանում, 1 ժամ տևողությամբ՝ խցանների մակերեսից ծծմբի, թիուրամի, ցինկի և այլ նյութերի հետքերի հեռացման համար: Ջուրը թափել և խցանները 1 անգամ լվանալ թորած ջրով:

2. Մշակումից հետո խցանները մանրէազերծվում են բիքսերում, գոլորշային մանրէազերծիչում՝ 120^{0}C, 45 րոպե տևողությամբ: Ռետինե խցանների մեծ քանակների դեպքում մշակումից հետո, առանց մանրէազերծման, դրանք չորացվում են չորացնող պահարանում՝ 50^{0}C-ից ոչ բարձր ջերմաստիճանում, 2 ժամ տևողությամբ և պահվում փակ տարողություններում, մութ, հով տեղ, 1 տարուց ոչ ավելի: Խցանները մանրէազերծվում են օգտագործումից առաջ:

3. Մանրէազերծված խցանները պահում են փակ բիքսերում 3 օրից ոչ ավելի: Բիքսերը բացելուց հետո խցանները կարելի է օգտագործել 24 ժամվա ընթացքում:

ԱԼՅՈՒՄԻՆԵ ԿԱՓԱՐԻՉՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԳ

Սրսկման լուծույթների և աչքի կաթիլների տարողությունները փակելու համար նախատեսված ալյումինե կափարիչները պահել լվացող նյութերի 1-2%-անոց, մինչև 70^0-80^{0}C տաքացրած լուծույթներում, 15 րոպե տևողությամբ: Այնուհետև լուծույթը թափել, կափարիչները լվանալ հոսող ջրով, չորացնել օդային մանրէազերծիչներում (բիքսերում) 50^0-60^{0}C ջերմաստիճանում և պահել փակ տարողություններում (բիքսերում, պուլիկներում, տուփերում), դրանց աղտոտումը բացառող պայմաններում:

ՊՈԼԻԷԹԻԼԵՆԱՅԻՆ ԽՑԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԳ

Պոլիէթիլենային նոր խցանները մի քանի անգամ լվանալ 50^0-60^{0}C ջրմուղի ջրում: Եթե պահելու ընթացքում դրանք շատ են աղտոտվել, ապա կիրառել լվացվող միջոցներ, ողողել թորած ջրով և մանրէազերծել՝ ընկղմելով ջրածնի պերօքսիդի 6%-անոց թարմ լուծույթի մեջ, որից հետո լվանալ թորած ջրով, չորացնել չորացնող պահարանում 50^0-60^{0}C ջերմաստիճանում: Չորացրած խցանները պահվում են 3 օր մանրէազերծված, լավ փակվող պուլիկներում, բիքսերում, դրանց աղտոտումը բացառող պայմաններում:

ՊԼԱՍՏՄԱՍՍԱՅԻՑ ՊՏՈՒՏԱԿԱՎՈՐ ԽՑԱՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐԳ

Պլաստմասսայից պատրաստված նոր խցանները մի քանի անգամ լվանալ 50^0-60^0C ջրմուղի ջրով, չորացնել չորացնող պահարանում 50^0-60^0C ջերմաստիճանում: Չորացրած խցանները պահվում են փակ տուփերում կամ այլ տարողություններում, դրանց աղտոտումը բացառող պայմաններում:

Նշում 14.

ԱՌԱՆՁԻՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ՌԵԺԻՄԸ

ՕԲՅԵԿՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ՌԵԺԻՄԸ				ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐ ԻՄՆԵՐԸ	ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
	գոլորշու ճնշումը կգ/սմ^2		տևողությունը վրկ.			
	անվանական նշանակությունը	թույլատրելի շեղումը	անվան կան նշանակությունը	թույլատրելի շեղ ումը		
ա) ԳՈԼՈՐՇԱՅԻՆ ՄԵԹՈԴ						
Ապակյա ամանեղեն, հավանգներ, ապակե գործվածքային արտադրանք (խալաթներ, մառլյա, բամբակ) չքայքայվող մետաղից պատրաստված իրեր	2,0 (132^{0}C) 1,1+0,1 (120^{0}C)	±0,1 ±0,1	20 45	+2 +3	Գոլորշային մանրէազերծիչ	Մանրէազերծումը կատարվում է փաթեթավորված կամ չփաթե ավորված 2 տակ քաթանում կամ Ա կամ Բ մարկայի մագաղաթե թղթում, բիքսում, ապակյա բանկայում
Ռետինե արտադրանք	1,1 (120^{0}C)	±1	45	+3	__ - II---	__---II---
բ) ՕԴԱՅԻՆ ՄԵԹՈԴ						
Ապակե ամանեղեն, հավանգ, ապակուց ու չքայքայվող մետաղից և համաձուլվածքներից պատրաստված արտադրանք	180 180 180	±11 ±12 ±14	60 60 60	+5 +5 +5	Օդային մանրէազերծիչ -խցիկի ծավալը մինչև 25 դմ^3 -խցիկի ծավալը 25 դմ^3-ից մեծ մինչև 500դմ^3 -խցիկի ծավալը 500դմ^3-ից մեծ	Կատարվո ւմ է չոր արտադրանքի մանրէազերծում, փաթեթավորվա և փաթ թավորված
գ) ՔԻՄԻԱԿԱՆ ՄԵԹՈԴ						

ՕԲՅԵԿՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԱՆՐԷԱԶԵՐԾՈՂ ԳՈՐ ՈՆ	ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ՌԵԺԻՄԸ				ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ	ՄԱՆՐԷԱԶԵՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
		գոլորշու ճնշումը կգ/սմ^2		տևողությունը վրկ.			
		անվա-նական նշանա-կությունը	թույլատրելի շեղումը	անվան կան նշանա-կությունը	թույլատրելի շեղումը		
Ապակուց, չքայքայվող մետաղներից և համաձուլվածքներից, պոլիմերային նյութերից պատրաստված արտադրանք	Ջրածին պերօքսիդ* Պետստանդարտ 177-71 6%-անոց լուծույթ	1 50	- ±2	360 180	±5 ±5	Ապակուց, պլաստմասսայից պատրաստված կամ էմալապատված (վնասված էմալով) փակ տարողություններ	Մանրէազերծումը կա արվում է լրիվ ընկղմելով լուծու թի մեջ, որից հետո արտադրանքը լվացվում է մանրէազերծված ջրով

1. Դեղատնային ամանեղենը հանվում է մանրէազերծիչից, երբ վերջինում ջերմաստիճանը հասնում է 60-70^{0}C և անմիջապես ծածկվում մանրէազերծված խցաններով:
2. Օժանդակ նյութերը, մանր գույքը և այլն պահպանվում են այն փաթեթներում կամ բիքսերում, որոնց մեջ մանրէազերծվել են, աղտոտումը բացառող պայմանները ապահովելու համար:
* Ջրածին պերօքս դի ուծույթը կարելի է օգտագործել 7 օրվա ընթացքում՝ ատրաստման պահից հաշվված, եթե այն պահվել է փակ տարողությունում: Լուծույթը պիտանի միանվագ օգտագործման համար:

Ց Ա Ն Կ

ՄԱՆՐԷԱԶԵՐԾԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՌԵԺԻՄԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ

1. Գոլորշային մանրէազերծիչների աշխատանքի հսկողության համար անհրաժեշտ է՝
- բենզոյական թթու, հալման ջերմաստիճանը՝ 121^0-122^0 C,
- անտիպիրին և ռեզորցին, հալման ջերմաստիճանը՝ 110^0 C:
2. Չոր ջերմային մանրէազերծիչների աշխատանքի հսկողության համար օգտագործվում են՝
- տիոմիզանյութ, հալման ջերմաստիճանը՝ 180^0 C,
- սադաթթու, հալման ջերմաստիճանը՝ 180^0-184^{0}C,
- ասկորբինաթթու, հալման ջերմաստիճանը՝ 187^0-192^{0}C,

- բարբիտալ, հալման ջերմաստիճանը՝ 190^0-191^{0}C:

Մ Ա Տ Յ Ա Ն
ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

	Ժամանա-կացույց	Մանրէազերծո (ախտահանող) գործոն	Մշակման ժամ նակ	Պատասխանատու անձի ստորագրություն	Ծանոթ ություն
1	2	3	4	5	6

Նշում 15.

պերմանգանատի 1%-անոց լուծույթի պատրաստման համար կալիումի պերմանգանատի 10 մաս 1%-անոց լուծույթին ավելացվում է 6 մաս ծծմբական թթվի 1,5%-անոց լուծույթ:

Նշում 16.

Ֆունկցիոնալ նշանակությունից և մաքրության դասից կախված բուժական հիմնարկների և դեղատների սենքերի օդի մանրէաբանական աղտոտվածության թույլատրելի մակարդակները

N	Մաքրու-թյան դասը	Սենքի անվանումը	Սանիտարամանրէաբանական ցուցանիշներ					
			1մ^3 օդում մանրէների ընդհանուր քանակը (ԳԱՄ մ^3)		1մ^3 օդում Staphylococcus aureus գաղութների քանակը (ԳԱՄ մ^3)		1մ^3 օդում բորբոսա-սնկերի և խմորա-սնկերի քանակը	
			մինչ աշխատելը	աշխատանքի ժամանակ	մինչ աշխատելը	աշխատանքի ժամանակ	մինչ աշխատելը	աշխատանքի ժամանակ
1.	Արտա-կարգ մաքուր	դեղատների ասեպտիկ կառույցահատված,	Ոչ ավելի 200	Ոչ ավելի 200	Չպետք է լինի	Չպետք է լինի	Չպետք է լինի	Չպետք է լինի
2	Մաքուր	դեղատների ասիսենտական և փաթեթավորման սենքեր,	Ոչ ավելի 500	Ոչ ավելի 750	Չպետք է լինի	Չպետք է լինի	Չպետք է լինի	Չպետք է լինի

Տեսուչի ստորագրությունը _____ Տնտեսվարողի ստորագրությունը

_____